Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արարատի մարզի <<Կանաչուտի Գ. Եփրեմյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ինֆորմատիկա (6 դասաժամ), տեխնոլոգիա (4 դասաժամ), անգլերեն (8 դասաժամ) , ֆիզկուլտուրա (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է(Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն(Ձև5),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղերի, հավաստագրերի պատճենները(դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3×4չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերն ընդունվում է սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ փետրվարի 15–ից մինչև փետրվարի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09^{00}-ից -15^{00} -ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա մարտի 3-ին՝ ժամը 14:00-ին, Արարատի մարզի Կանաչուտի Գ. Եփրեմյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել (098)-43-32-73 հեռախոսահամարով: